

Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարան
Հասցե: 56B, Mirza Ghalib Street, Kolkata – 700 016
Հեռ. : (91-33) 4010-9051 / 2229 - 9051
Հեռատիպ: (91-33) 2227-5869
Էլ-փոստ: contact@armeniancollege.in
Վեբ կայք: www.armeniancollege.in
Կառավարիչ՝ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյան
Ադմինիստրատոր՝ Հարություն սրկ. Համբարձումյան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

19 օգոստոսի, 2008թ.

Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը հնդկահայ համայնքում

Օգոստոսի 17-ը՝ Ս. Աստվածածնի Վերափոխման տոնի օրը, նշանակալից էր հնդկահայ համայնքի և Մարդասիրական ճեմարանի սաների համար:

2007թ. վերածումից հետո խաղողօրհնության տոնը հռչակվել էր, որպես Սեյդաբադի Ս. Աստվածածին եկեղեցու ուխտի օր: Եվ այս առիթով կրկին անգամ ուխտագնացություն էր կազմակերպվել դեպի՝ երբեմնի հայաշատ այս վայրը, որտեղ Ջուդայեցի նշանավոր վաճառական, բարեգործ Խոջա Պետրոս Հարությունյանի անձնական միջոցներով, 1758 թ. կառուցվել է մի չքնաղ եկեղեցի՝ ի հիշատակ իր ծնողների:

Նախքան պատարագի սկսվելը հավատացյալների ներկայությամբ կատարվեց պատարագչի քահանայական նոր զգեստների օրհնության կարգ, քանի որ, ընդունված կարգի համաձայն, յուրաքանչյուր նոր սպասք, իր կամ զգեստ եկեղեցում գործածելուց առաջ հարկավոր է օրհնել կամ սրբագործել ըստ պատշաճի:

Օրվա պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը, որին ընկերակցում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Հարություն սրկ. Համբարձումյանը:

Հրնթացս Ս. Պատարագի, պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ ջերմորեն շնորհավորելով ներկաներին հիշարժան օրվա կապակցությամբ:

Պատարագի ավարտին, Հայոց Եկեղեցու ընկալյալ ավանդության համաձայն, կատարվեց խաղողի օրհնության արարողություն: Օրհնված խաղողը բաժանվեց ներկա բազմությանը:

Ս. Պատարագի վերջում տեղի ունեցավ նաև հյուրասիրություն: Արարողությանը ներկա էին Կալկաթայի հնդկահայեր, Մարդասիրական ճեմարանի սաները, ճեմարանի ուսուցիչներ և հյուրեր: